20/01.12.2023

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

Երևան քաղաքի առաջին ատյանի
ընդհանուր իրավասության դատարան,
նախագահող դատավոր՝ Մ.Մարտիրոսյան

Հայաստանի Հանրապետության
վերաքննիչ հակակոռուպցիոն դատարան,
նախագահող դատավոր՝ Ա.Մարտիրոսյան

2024 թվականի նոյեմբերի 27-ին քաղաք Երևանում

ՀՀ վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի կոռուպցիոն հանցագործությունների քննության դատական կազմը (այսուհետ նաև՝ Վճռաբեկ դատարան),

նախագահությամբ՝ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ
Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆԻ
Ս.ՉԻՉՈՅԱՆԻ
Դ.ՎԵՔԻԼՅԱՆԻ

գրավոր ընթացակարգով քննության առնելով մեղադրյալ [redacted] [redacted] վերաբերյալ թիվ 20/01.12.2023 գործով ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն

դատարանի (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2024 թվականի հունիսի 26-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ե.Ավագյանի վճռաբեկ բողոքը,

ՊԱՐԶԵՑ

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան) [redacted] միջնորդությունը և թույլատրվել է երկու ամիս ժամկետով [redacted] նկատմամբ իրականացնել «Արտաքին դիտում», «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում» և «Ներքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

2. Հիշյալ որոշման դեմ մեղադրյալ [redacted] հատուկ վերանայման բողոքը Վերաքննիչ դատարանի 2023 թվականի հունիսի 26-ի որոշմամբ բավարարվել է, և կայացվել է Առաջին ատյանի դատարանի որոշմանը փոխարինող դատական ակտ՝ մերժելով «Արտաքին դիտում», «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում» և «Ներքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցակացնելու վերաբերյալ միջնորդությունը:

3. Վերաքննիչ դատարանի վերոնշյալ որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար Ե.Ավագյանը բերել է հատուկ վերանայման բողոք, որը Վճռաբեկ դատարանի 2024 թվականի սեպտեմբերի 4-ի որոշմամբ ընդունվել է վարույթ և սահմանվել է դատական վարույթի իրականացման գրավոր ընթացակարգ:

<u>Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.</u>

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքի սահմաններում՝ ներքոհիշյալ փաստարկներով.

4. Բողոքի հեղինակի պնդմամբ՝ Վերաքննիչ դատարանը թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն ազդել է վարույթի ելքի վրա:

Մասնավորապես, բողոք բերած անձը նշել է, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված միջնորդությունից և կից նյութերից տեսանելի է, որ [redacted] ստացվել են օպերատիվ տեղեկություններ այն մասին, որ [redacted] Միաժամանակ, կազմված՝ «Օպերատիվ հարցում», «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում», «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքների մասին արձանագրության համաձայն՝ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:

Վերոգրյալ փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում բողոքաբերը գտել է, որ նշված արձանագրությունից առնվազն ակնհայտ է, որ առկա են եղել հիմքեր կասկածելու, որ [redacted] առերևույթ կատարել է ծանր հանցագործություն, և միաժամանակ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման նպատակով ձեռնարկվել են համապատասխան միջոցներ, մասնավորապես՝ իրականացվել են «Օպերատիվ հարցում», «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում», «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումները, սակայն տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է եղել, որի մասին նշվել է հիշյալ արձանագրությունում:

Հետևաբար պարզ չէ, թե մինչև քրեական վարույթ նախաձեռնվելը ինչ տվյալ և/կամ փաստարկ պետք է ներկայացվի անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ, որպեսզի վերադաս դատարանի գնահատմամբ այն

բավարար լինի անձի սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքի սահմանափակման և դրա նկատմամբ միջամտություն իրականացնելու համար:

4.1. Բացի այդ, բողոքաբերը նշել է, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման հնարավորությունը գնահատելիս Վերաքննիչ դատարանը ուշադրության չի արժանացրել այն հանգամանքը, որ տվյալ փուլում՝ ի տարբերություն արդեն իսկ նախաձեռնված քրեական վարույթի, անհրաժեշտ տեղեկատվություն ձեռք բերելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու հարցում իրավասու մարմնի գործիքակազմը լայն չէ և սույն փուլում օպերատիվ-հետախուզական միջոցառումն իրականացնող մարմնի առջև դրված խնդիրներն իրականացնելու համար դատարանից թույլտվություն ստանալիս՝ ներկայացվող տվյալները չեն կարող համարժեք լինել բավարարության այն շեմին, որը, որպես կանոն, բնորոշ է նախաքննության փուլին, երբ վարույթն իրականացնող մարմնինն այս կամ այն հանգամանքը պարզելու, դրա վերաբերյալ փաստական տվյալներ ստանալու համար օժտված է անհամեմատ լայն գործիքակազմով:

Միժամանակ բողոքաբերը նշել է, որ խնդրո առարկային առնչվող համապատասխան տվյալների ներկայացման հնարավորության հարցը պետք է դիտարկել ոչ միայն հիշյալ տեղեկությունների ստացման աղբյուրները, այլև դրանց ստացման եղանակները բացահայտելու վտանգը բացառելու համատեքստում և այդ առնչությամբ վերաբերելի իրավակարգավորումներում ամրագրված պայմանը հաղթահարելու համար առավել բարձր պահանջներ առաջ քաշելն ինքին կարող է հանգեցնել օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնին օրենսդրորեն վերապահված գործառույթների անհարկի միջամտության:

5. Վերոգրյալի հիման վրա, բողոք բերած անձը խնդրել է բեկանել Վերաքննիչ դատարանի 2024 թվականի հունիսի 26-ի որոշումը և կայացնել դրան փոխարինող դատական ակտ:

<u>Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. [redacted] կողմից 2023 թվականի դեկտեմբերի 1-ին կազմված և միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարանին ներկայացված արձանագրության համաձայն՝ [redacted] *ստացվել են օպերատիվ տեղեկություններ այն մասին, որ* [redacted] *օժանդակում է փաստաթուղթ կեղծելու* [redacted]

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում պարզվել է, որ [redacted] *բջջային հեռախոսահամարը, վերջինս բնակվում է* [redacted] *գտնվող տանը և իր՝ վերոգրյալ հնարավոր հանցավոր գործունեությանը վերաբերելի խոսակցությունները վարում է նշված հեռախոսահամարով և նշված հասցեից:*

Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը:(...)»[1]*:*

7. Օպերատիվ-հետախուզական միջոցառումներն անցկացնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին Առաջին ատյանի դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Դատարան ներկայացված նյութերում առկա են բավարար տեղեկություններ ենթադրելու համար, որ* [redacted]

---

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթ 9:

[redacted] օժանդակում է փաստաթուղթ կեղծելու [redacted] Դատարանն արձանագրում է, որ ներկայացված փվյալներն առերևույթ վկայում են ՀՀ քրեական օրենսգրքի 46-461-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի հնարավոր առկայության մասին, որը համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ հանդիսանում է ծանր հանցանք:

Միջնորդությունից և ներկայացված նյութերի ուսումնասիրությունից երևում է նաև, որ [redacted] հեռախոսահամարը, վերջինս բնակվում է [redacted] և իր՝ վերոգրյալ հնարավոր հանցավոր գործունեությանը վերաբերելի խոսակցությունները վարում է նշված հեռախոսահամարով և նշված հասցնից:

Բացի այդ, ըստ ներկայացված նյութերի՝ միջնորդություն ներկայացրած օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինը ձեռնարկել է նաև այլ միջոցներ՝ ձեռնարկվել են «օպերատիվ հարցում» և «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց արդյունքում հնարավորություն չի ընձեռնվել հաստատել կամ հերքել ստացված օպերատիվ տեղեկությունները: Այսպիսով՝ ներկայացված նյութերը պարունակում են տեղեկություններ [redacted] կողմից առերևույթ ծանր՝ ՀՀ քրեական օրենսգրքի 46-461-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման և այդ հանցավոր գործունեությունը՝ վերջինիս կողմից շարունակելու հավանականության մասին: Ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել՝ ենթադրյալ հանցագործության բացահայտման և նշված անձի հանցավոր գործունեության շարունակումը կանխելու

համար անհրաժեշտ տեղեկատվությունը, իսկ այլ եղանակով ողջամտորեն հնարավոր չէ այդ տեղեկատվության ձեռքբերումը: Դատարանը գտնում է, որ ենթադրյալ հանցանք կատարող անձին հանցանքի կատարման պահին կամ դրանից անմիջապես հետո բացահայտելու, նրա ենթադրյալ հանցավոր գործունեության շարունակումը հայտնաբերելու և կանխելու նպատակով [redacted] *նկատմամբ երկու ամիս ժամկետով՝ «Թվային, այդ թվում հեռախոսային հաղորդակցության վերահսկում», «Ներքին դիտում» և տեխնիկական միջոցների կիրառմամբ «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու անհրաժեշտության մասին ներկայացվել են բավարար հիմնավորումներ, նշված օպերատիվ- հետախուզական միջոցառումներն իրականացնելը թույլատրելու անհրաժեշտությունը բխում է ենթադրյալ ծանր հանցագործության կատարումը բացահայտելու, ենթադրյալ հանցավոր գործունեության հավանական շարունակումը կանխելու անհրաժեշտությունից, քանի որ տվյալ դեպքում հանրային շահը գերակայում է* [redacted] *մասնավոր շահի՝ այդ թվում անձնական կյանքի գաղտնիության նկատմամբ:(...)»*[2]*:*

8. Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ *«(...) Վերաքննիչ դատարանը, հատուկ վերանայման բողոքում նշված հիմքերի և այն հաստատող փաստերի սահմաններում և վկայակոչված իրավանորմերի վերլուծության, արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո օրինականության ու հիմնավորվածության տեսանկյունից գնահատելով վիճարկվող որոշումը և որոշմամբ կատարված եզրահանգումները, արձանագրում է, որ խնդրո առարկա միջնորդությունը և դրա արդյունքում հայցվող իրավունքների սահմանափակումը միջնորդությունը հարուցողը հիմնավորել է բացառապես արձանագրությամբ այն մասին,* [redacted] *օժանդակում է փաստաթուղթ կեղծելու կամ* [redacted]*: Ընդ որում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ այս*

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 1-ին, թերթեր 11-14:

համապատասխան առարկայական չէ, ներկայացված փաստաթուղթը «Արձանագրություն», «Տեղեկանք» կամ «Զեկուցագիր» վերտառությունն ունի: Փաստացի ստացվում է մի իրավիճակ, երբ անձի նկատմամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու համար դատարան է ներկայացվել փաստաթուղթ, որի բովանդակությունը կրկնվում է դրա հիման վրա կազմված որոշման և միջնորդության մեջ, ավելին՝ արձանագրության մեջ արձանագրված տվյալներն, ըստ էության, օպերատիվ տեղեկատվության հիման վրա ստացված տվյալներն են և դրանք հավաստող որևէ այլ լրացուցիչ տվյալ առաջին ատյանի դատարանին չի ներկայացվել:

Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը հարկ է համարում արձանագրել, որ սույն որոշմամբ վկայակոչված, Վճռաբեկ դատարանի կողմից կայացված նախադեպային որոշումները վկայում են այն մասին, որ վերադաս ատյանի ձևավորած իրավական դիրքորոշումն այն է, որ բացառապես օպերատիվ տեղեկատվության առկայությունը չի կարող համարվել բավարար հիմք օպերատիվ-հետախուզական միջոցառման կատարումը թույլատրելու համար: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը շեշտադրումը կատարում է այն հանգամանքին, որ օպերատիվ մարմնի կողմից կազմված համապատասխան զեկուցագրի հիման վրա անձի իրավունքների սահմանափակումը չի կարող իրավաչափ համարվել, իսկ այս դեպքում ստորադաս դատարանը որպես բավարար հիմնավորում ընդունել է կասկածի շուրջ կազմված արձանագրությունը, որտեղ շարադրված տվյալները, թեև կարող են ունենալ օբյեկտիվ և իրական հիմքեր, սակայն որևէ կերպ չեն փաստարկվում: Ընդ որում, Վճռաբեկ դատարանը սույն դիրքորոշմանը հանգել է այն դեպքում, երբ ստորադաս դատարանից հայցվել է միայն մեկ գաղտնի օպերատիվ–հետախուզական միջոցառման կատարում և ոչ թե՝ համալիր, որն առավել կոշտ միջամտություն է ուղղված անձի սահմանադրական իրավունքների սահմանափակմանը:

(...) Սույն դեպքում ստորադաս դատարանն իր դատական ակտում արձանագրել է, որ դատարան ներկայացված նյութերում առկա են բավարար տեղեկություններ ենթադրելու համար, որ [redacted] *(...)*

օժանդակում է փաստաթուղթ կեղծելու [redacted] *Դատարանն արձանագրել է, որ ներկայացված տվյալներն առերևույթ վկայում են ՀՀ քրեական օրենսգրքի 46-461-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցանքի հնարավոր առկայության մասին, որը համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 17-րդ հոդվածի՝ հանդիսանում է ծանր հանցանք: Բացի այդ, ստորադաս դատարանի գնահատմամբ՝ ըստ ներկայացված նյութերի միջնորդությունն ներկայացրած օպերատիվ-հետախուզական գործունեությունն իրականացնող մարմինը ձեռնարկել է նաև այլ միջոցներ՝ «օպերատիվ հարցում» և «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումները, որոնց արդյունքում հնարավորություն չի ընձեռնվել հաստատել կամ հերքել ստացված օպերատիվ տեղեկությունները և վկայակոչվածը բավարար է համարել՝ ներկայացված միջնորդությունը բավարարելու համար այն դեպքում, երբ նշված օպերատիվ տեղեկատվության ճշմարտացիությունը հավաստող այլ նյութեր չեն ներկայացվել և դատական երաշխիք տրամադրող դատարանն օբյեկտիվորեն զրկված է եղել նման տեղեկատվությունը գնահատելու հնարավորությունից:*

(...) Միևնույն ժամանակ, Վերաքննիչ դատարանը փաստում է, որ միջնորդությամբ և կից նյութերով չի ներկայացվել այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ բավարար տվյալներ: Մասնավորապես՝ փաստարկումն առ այն, որ՝ «օպերատիվ հարցում», «օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում», «արտաքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվություն, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ ծանրակշիռ փաստարկ չէ և այն հիմնավորող այլ տվյալների բացակայության պայմաններում բավարար չէ՝ նման անհնարինության մասին փաստարկված հետևության հանգելու համար:

(...) Նման պայմաններում, Վերաքննիչ դատարանի գնահատմամբ առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերի, իսկ ավելի կոնկրետ՝ կազմված համապատասխան արձանագրության հիման վրա անձի իրավունքների սահմանափակումն իրավաչափ չի կարող համարվել, ուստի ստորադաս դատարանը, բավարարելով ներկայացված միջնորդությունը, հանգել է վարույթի նյութերից և վերաբերելի իրավական կարգավորումներից չբխող հետևության:(...)»[3]:

<u>Վճռաբեկ դատարանի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

9. Սույն վարույթով Վճռաբեկ դատարանի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր են արդյո՞ք [redacted] նկատմամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները:

10. ՀՀ Սահմանադրության 33-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների և հաղորդակցության այլ ձևերի ազատության և գաղտնիության իրավունք:*

2. Հաղորդակցության ազատությունը և գաղտնիությունը կարող են սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

3. Հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել միայն դատարանի որոշմամբ, բացառությամբ երբ դա անհրաժեշտ է պետական անվտանգության պաշտպանության համար և պայմանավորված է հաղորդակցվողների՝ օրենքով սահմանված առանձնահատուկ կարգավիճակով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Յուրաքանչյուր ոք*

---

[3] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 3, թերթեր 37-69:

ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

11. «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Օպերատիվ-հետախուզական գործունեությունը մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, պետական ու հասարակական անվտանգությունը հակահիրավական ոտնձգություններից պաշտպանելու նպատակով օրենքով նախատեսված օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների կողմից օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացումն է»:*

«Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ *«[Ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում, կաշառք ստանալու կամ կաշառք տալու նմանակում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները, ինչպես նաև արտաքին դիտում օպերատիվ-հետախուզական միջոցառումը, եթե արտաքին դիտման արդյունքների ամրագրումն առանց տեխնիկական միջոցների օգտագործման հնարավոր չէ, և անձը (անձինք), որի (որոնց) նկատմամբ իրականացվում է արտաքին դիտումը, ողջամտորեն չէր (չէին) կարող ենթադրել դրա անցկացման հնարավորության մասին, ապա կարող են անցկացվել միայն դատարանի թույլտվությամբ:*

2. Սույն հոդվածով նախատեսված օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման համար դատարանի թույլտվությունը ստանալու համար օպերատիվ ստորաբաժանման ղեկավարը օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարին ներկայացնում է օպերատիվ-հետախուզական միջոցառում անցկացնելու մասին որոշումը և միջնորդությունը՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնելու համար դատարան դիմելու վերաբերյալ: Որոշումը և դրան կցվող նյութերը դատարան է ներկայացնում օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: (...)»:

Նույն օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն *«[Ներքին դիտում, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վերահսկում, հեռախոսային խոսակցությունների վերահսկում, ֆինանսական տվյալների մատչելիության ապահովում և ֆինանսական գործարքների գաղտնի վերահսկում] օպերատիվ-հետախուզական միջոցառումները կարելի է անցկացնել միայն այն դեպքերում, երբ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից սույն օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է»:*

12. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օպերատիվ-հետախուզական միջոցառումների կոնկրետ տեսակն ընտրելիս անձի իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտության բնույթին, և հաշվի առնելով այն հանգամանքը, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումների գործողությունների իրականացմամբ լուրջ միջամտություն է տեղի ունենում անձի անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության իրավունքին, արձանագրել է, որ օրենսդիրն ամրագրել է, որ այն կարող է իրականացվել բացառապես երբ՝

ա) անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և

բ) եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է:

Ընդ որում՝ Վճռաբեկ դատարանը ընդգծել է, որ վերջին չափանիշի ամրագրմամբ օրենսդիրն inter alia սահմանել է, որ նշված միջոցառումը կարող է իրականացվել միայն որպես ծայրահեղ (վերջին) միջոց (last resort), երբ այլընտրանքային եղանակով անհնարին է առաջադրված խնդիրների լուծման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումը: Այսինքն՝ նշված միջոցառումը ոչ միայն պետք է իրականացվի դրա բնույթին և նպատակային նշանակությանը համապատասխան, այլ նաև այն դեպքում, երբ բացակայում են անձի իրավունքների և ազատությունների ոլորտ նվազ միջամտության եղանակով նույն տեղեկությունների ձեռքբերման այլ միջոցներ, այդ թվում՝ քրեական գործով վարույթի շրջանակում քրեական դատավարության օրենսգրքով կոնկրետ տեղեկությունների ձեռքբերման համար նախատեսված միջոցները[4]:

12.1. Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման փաստական հիմքերի ապացուցողական շեմին, *Ռուբեն Խլղաթյանի* վերաբերյալ գործով արձանագրել է, որ միայն օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկատվության մասին տեղեկանքն ինքնին բավարար չէ հաղթահարված համարելու այն նվազագույն շեմը, որն անհրաժեշտ է անձի սահմանադրական և կոնվենցիոնալ իրավունքի սահմանափակման և դրա նկատմամբ միջամտություն իրականացնելու համար[5]:

---

[4] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ Գոռ Սարգսյանի վերաբերյալ թիվ ԵԿԴ/0229/01/16 գործով 2019 թվականի ապրիլի 11-ի որոշման 17.2-րդ կետը:

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ռուբեն Խլղաթյանի* վերաբերյալ թիվ 48/10.06.2021 գործով 2023 թվականի սեպտեմբերի 15-ի որոշման 11-րդ կետը:

12.2. Վճռաբեկ դատարանը, մեկ այլ՝ թիվ *ՕՀՄ-56/12.10.2023* գործով անդրադառնալով *Ռուբեն Խլղաթյանի* վերաբերյալ գործով արտահայտված այն դիրքորոշմանը, համաձայն որի՝ միայն օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկատվության մասին տեղեկանքը միջնորդության հիմնավորվածությունը հաստատող բավարար փաստակազմ չէ և այդ տեղեկանքի հավաստիությունը գնահատելու համար անհրաժեշտ է ներկայացնել այլ փաստական տվյալներ, արձանագրել է, որ տվյալ գործով Վճռաբեկ դատարանի եզրահանգումը պայմանավորված է եղել կոնկրետ վարույթի շրջանակներում ներկայացված միջնորդության հիմնավորվածության տեսանկյունից՝ ձեռք բերված օպերատիվ տեղեկատվության բավարարության վերաբերյալ դատարանի գնահատականով: Վճռաբեկ դատարանը միաժամանակ ընգծել է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառման իրականացման թույլտվություն ստանալու միջնորդության հիմնավորվածությունը հաստատող փաստակազմում առկա օպերատիվ տեղեկատվության հավաստիությունը հիմնավորող այլ փաստական տվյալներ ներկայացնելու պահանջը համահունչ չէ օպերատիվ-հետախուզական գործունեության բնույթին և նպատակային նշանակությանը, սակայն յուրաքանչյուր դեպքում դատարանին է վերապահված քննարկվող միջնորդության հիմնավորվածությունը ստուգելիս օպերատիվ տեղեկատվության բավարարության գնահատման իրավասությունը[6]:

13. Անդրադառնալով օպերատիվ աղբյուրից ստացված տեղեկատվությունը, որպես անձի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի սահմանափակման և դրա նկատմամբ միջամտություն իրականացնելու համար բավարար կամ ոչ բավարար տվյալ լինելուն՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ դատարանին միջնորդություն ներկայացնելու իրավասություն ունեցող մարմնի կողմից ներկայացված տեղեկատվությունը ոչ բավարար դիտարկելը միայն

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ թիվ ՕՀՄ-56/12.10.2023 գործով 2024 թվականի հոկտեմբերի 12-ի որոշման 14-րդ կետը:

այն պատճառաբանությամբ, որ այլ տվյալներ չեն ներկայացվել, խիստ ձևական մոտեցում է և չի բխում *Ռուբեն Խլղաթյանի* վերաբերյալ գործով առկա փաստական հանգամանքների վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորած և նախորդ կետում մեջբերված դիրքորոշումներից:

13.1.Վերահաստատելով վերոհիշյալ դատական նախադեպերով արձանագրած դիրքորոշումները՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անձի իրավունքների նկատմամբ միջամտության անհրաժեշտությունը պետք է դիտարկել ոչ թե ձևական (ֆորմալ), այլ բովանդակային տեսանկյունից: Նախորդիվ ասվածից հետևում է, որ իրավասու դատարանի կողմից միջնորդության կապակցությամբ կառուցվող դիրքորոշումները պետք է ձևավորվեն ոչ թե միջնորդությանը կից նյութերի, այլ կերպ՝ օպերատիվ-հետախուզական միջոցառումներն իրականացնող մարմնի կողմից ներկայացված տվյալների քանակական, այլ դրանց որակական հատկանիշների հիման վրա: Այսպես. եթե օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու վերաբերյալ միջնորդությանը կից ներկայացվել է այնպիսի տվյալ (տվյալներ), որն իր բովանդակությամբ վկայում է այն մասին, որ անձը, ում նկատմամբ պետք է դրանք անցկացվեն, կասկածվում է ծանր և առանձնապես ծանր հանցագործության կատարման մեջ, և եթե կան հիմնավոր ապացույցներ, որ այլ եղանակով օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերումն անհնարին է, ապա դատարանը, քննության առնելով միջնորդությունը, պետք է այն դիտարկի դրա՝ անձի իրավունքների նկատմամբ միջամտությունը հիմնավորելու առումով:

Վճռաբեկ դատարանը փաստում է, որ հակառակ մոտեցումը կարող է հանգեցնել այնպիսի իրավիճակների, երբ դատարանը կբավարարի օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ միջնորդությունը միայն դրան կից, քանակապես գերակշռող, սակայն անբովանդակ նյութերի հիման վրա, որն ուղղակիորեն կխեղաթյուրի դատարանի՝ անձի իրավունքների նկատմամբ

միջամտության իրավաչափությունն ստուգման ենթարկող իրավական գործառույթի էությունը, ինչպես նաև կհանգեցնի չպատճառաբանված դատական ակտի կայացման:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- [redacted] կողմից 2023 թվականի դեկտեմբերի 1-ին կազմված և միջնորդությանը կից Առաջին ատյանի դատարանին ներկայացված արձանագրության համաձայն՝ ձեռք են բերվել տվյալներ այն մասին, որ [redacted] օժանդակում է փաստաթուղթ կեղծելու կամ [redacted],

- ենթադրյալ այդ հանցավոր արարքի բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման համար իրականացվել են «Օպերատիվ հարցում», «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում», «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումները, սակայն ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը[8],

- Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմամբ բավարարվել է [redacted] միջնորդությունը և թույլատրվել է երկու ամիս ժամկետով [redacted] նկատմամբ իրականացնել «Արտաքին դիտում», «Թվային, այդ թվում՝ հեռախոսային խոսակցությունների վերահսկում» և «Ներքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ[9],

- Վերաքննիչ դատարանի որոշման համաձայն՝ առարկայական չէ, թե ներկայացված փաստաթուղթը «Արձանագրություն», «Տեղեկանք» կամ «Ձեկուցագիր» վերտառությունն ունի և կից նյութերով չի ներկայացվել այլ եղանակով

---

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմնի կողմից օրենքով իր վրա դրված խնդիրների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերման անհնարինության վերաբերյալ բավարար տվյալներ և «Օպերատիվ հարցում», «Օպերատիվ տեղեկությունների ձեռքբերում», «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացումը ծանրակշիռ փաստարկ չէ և այն հիմնավորող այլ տվյալների բացակայության պայմաններում բավարար չէ՝ նման անհնարինության մասին փաստարկված հետևության հանգելու համար[10]:

15. Նախորդ կետում շարադրված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 10-13.1-ին կետերում վկայակոչված իրավական նորմերի և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելով, հանգել է անհիմն հետևությունների:

Մասնավորապես, Վերաքննիչ դատարանը, Առաջին ատյանի դատարանի որոշման իրավաչափությունը գնահատելիս, պատճառաբանել է, որ Առաջին ատյանի դատարան ներկայացված օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու թույլտվության մասին միջնորդությանը կից արձանագրության մեջ նշված տվյալները, ըստ էության, օպերատիվ տեղեկատվության հիման վրա ստացված տվյալներն են և դրանք հավաստող որևէ այլ լրացուցիչ տվյալ Առաջին ատյանի դատարանին չի ներկայացվել, ուստի Առաջին ատյանի դատարան ներկայացված նյութերի, իսկ ավելի կոնկրետ՝ կազմված համապատասխան արձանագրության հիման վրա անձի իրավունքների սահմանափակումն իրավաչափ չի կարող համարվել: Մինդեռ Վճռաբեկ դատարանը փաստում է, որ Վերաքննիչ դատարանը, առանց բովանդակային ուսումնասիրության ենթարկելու ներկայացված արձանագրությունը, անտեսել է այն հանգամանքը, որ օպերատիվ-հետախուզական միջոցառումն անցկացնող մարմինը, նախքան դատարան միջնորդությունը ներկայացնելը, արդեն իսկ իրականացրել է «Օպերատիվ հարցում», «Օպերատիվ տեղեկությունների

[10] Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը

ձեռքբերում», «Արտաքին դիտում» համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, որոնց արդյունքում ձեռք է բերել այնպիսի փաստական տվյալներ, ինչպիսիք են [redacted] կողմից ենթադրյալ ծանր հանցագործության կատարումը, վերջինիս կողմից օգտագործվող բջջային հեռախոսահամարը, բնակության վայրի հասցեն, [redacted] անհտական տվյալները և, միևնույն ժամանակ, արձանագրել, որ ձեռնարկված միջոցառումների արդյունքում հնարավոր չի եղել ձեռք բերել ենթադրյալ հանցագործության բացահայտման համար անհրաժեշտ տեղեկատվությունը: Հետևաբար, Վերաքննիչ դատարանի այն պատճառաբանությունը, որ ներկայացված արձանագրությունը բավարար տվյալ չէ և այլ տվյալներ չեն ներկայացվել, որոնք կհիմնավորեն անձի սահմանադրական և կոնվենցիոն իրավունքի սահմանափակման անհրաժեշտությունը, խիստ ձևական մոտեցում է և չի բխում սույն որոշման 13-13.1-ին կետերում Վճռաբեկ դատարանի կողմից արտահայտած իրավական դիրքորոշումներից:

16. Վերոգրյալի հիման վրա՝ Վճռաբեկ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի՝ [redacted] նկատմամբ համալիր օպերատիվ-հետախուզական միջոցառումներ իրականացնելու թույլտվություն ստանալու մասին Առաջին ատյանի դատարանի որոշումը բեկանելու վերաբերյալ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնավոր չեն:

17. Ամփոփելով վերոգրյալը՝ Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանը, դատական ակտ կայացնելիս, թույլ է տվել դատական սխալ՝ քրեադատավարական օրենքի էական խախտում, որն իր բնույթով էական է, քանի որ ազդել է վարույթի ելքի վրա, հետևաբար ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 362-րդ հոդվածի համաձայն՝ հիմք է վճռաբեկ բողոքը բավարարելու և Վերաքննիչ դատարանի 2023 թվականի հունիսի 26-ի դատական ակտը բեկանելու համար:

Միևնույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը գտնում է, որ սույն գործով Առաջին ատյանի դատարանը կայացրել է գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ՝ թույլ չտալով գործի ելքի վրա ազդեցություն ունեցող դատական սխալ, ուստի

անհրաժեշտ է օրինական ուժ տալ Առաջին ատյանի դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 162-րդ, 163-րդ և 171-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ, 34-րդ, 264-րդ, 281-րդ 361-րդ, 363-րդ և 400-րդ հոդվածներով՝ Վճռաբեկ դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ 20/01.12.2023 գործով մեղադրյալ [redacted] վերաբերյալ ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի 2023 թվականի հունիսի 26-ի որոշումը բեկանել և օրինական ուժ տալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2023 թվականի դեկտեմբերի 1-ի որոշմանը:

2. Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացնելու օրը:

Նախագահող՝ _____ Ա.ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ

_____ Ռ.ՄԽԻԹԱՐՅԱՆ

_____ Ս.ՉԻՉՈՅԱՆ

_____ Դ.ՎԵՔԻԼՅԱՆ